


15324



ԽՍՁՈՒԱԾ ՀԱՒԱՏՔԻ ՄԸ  
ԱՂԱՂԱԿԸ



891.99

Ո - 45

1920

ԱՂԵՔՍԱՆԳՐԻ Ա.

*Handwritten notes in the top left corner.*

Մ. ՈՍԿԵԱՆ



891.99

n-45

# ԽԱԶՈՒԱԾ ՀԱՒԱՏՔԻ ՄԸ ԱՂԱՂԱԿԸ



Մարտիեկը  
Յուլիս 14  
Աւաղ փառացս...  
Մասնորին  
Կամբասանեմ եեզ  
Անե՛ճի եեզ, անե՛ճի  
Ապսամբ խօսեմ



2003

1920

ԱՂԵՔԱՆԴՐԻՍ



27967-4.2

2094



10833-57

O Cri  
Qui retentis, ici,  
Si tragique, aujourd'hui  
Tu peux courir, immensément de plaine en plaine.  
Car tu es juste, ô cri,  
Bien que tu sois la haine.

EMILE VERHAEREN.

6459

ՄՈՐՍԷՅԵՏԵ  
LA MARSEILLAISE



Կը սիրէի ես զանի  
Հոգիս անոր հունչին մէջ  
Կը դառնար վանկ մը հնչեց.  
Կը յայտնէրուն մէջ անոր  
Կ'ունկընդդէի ես թաւալուն հոյակապ.  
Խաչալին, Գիւցազնութեան ու փառքին...  
Ինձ կը թուէր թէ անոր  
Ռազմազրզորդ դաշնակութեան մէջ վսեմ՝  
Աստիտական ժողովուրդի մը ամբողջ  
Ամբողջ հոգին կը թրթուար...:

Երգ մըն էր ան. Մարդկութեան երգը հզօր,  
Որուն բառերն՝ զերդ արոյրեայ գնդակներ՝  
Կը պատէին ժանս բնութեան խաւարն հո՞ծ,  
Ազատութեան դաշխուրանները՝ իբրև  
Լուսացնցուղ հակայ ջահեր վառելով՝  
Մարդկութեան երկնքին տակ մթամամ...:

Չայն մըն էր ան, բարձրաբարբառ ու հուժկու,  
Նոր Սինայի մը բարձունքէն արձակուած,  
Որ՝ Ենովեան որոտամբ՝  
Եղբայրութեան, Արբարութեան, Իրաւանց  
Կուտար պատգամն անձկալի...:

Երբ ան անցնէր օդին մէջ,  
Ինչպէս ուժեղ թեւթախն արծուի մը հակայ,  
Աւեր, ջախջախ լանջքերու տակ կը մրրկուէր  
Ընդվզումի ստեղծիչ հեւքը ներկու...:



Կ'արթննային ժողովուրդներն, այն ասան,  
 Եւ խառնուած ուղիս յորձքերուն մէջ անոր,  
 Կոհակներուն պէս զայրազնոտ ծովերու՝  
 Դէպի կրկէս, զէ՛պ կռիւ  
 Կը նետուէին անապու...

Մարտէյեէ՛ղը...

Բլրան վերէն հաղիւ թէ ան կը հնչէ,  
 Ռուսքերու հոծ տարափում  
 Մ'յանկարծա՛վէժ կողովէ,  
 Ռազմադաշտին տարածութիւնը մնայլ.  
 Եւ բիւր հազար մարդերու  
 Գորշ փաղանքներ՝ մահուան խօլ  
 Յիմարութեամբն արբեցած՝  
 Ամհարչաւ գրոհներու կ'երկարին.  
 Մինչ հողիները անոնց՝  
 Լեցուած անհուն աստուածային ցասումով՝  
 Այդ մարտազու, բռնազըբուժ Երզին մէջ  
 Արզէն հրեզէն կարմիր խաղեր են դարձեր...

Մարտէյեէ՛ղը...

Կար օր մը որ ան աշխարհներ կը կանչէր  
 Իր հունչքին մէջ, և բովանդակ Մարդկութիւնն՝  
 Իր զիւթազօր կշռոյթին տակ նուաճած՝  
 Իր դաւանած խտէալի կուռքերուն  
 Առջև ծունկի, պատարագի կը բերէր...  
 — Ռ՛ւր են, ս՛ւր են այդ օրերն...

Ո՛հ, այս գիշեր, երբ լուսնին հետ զէ՛մ գիմաց  
 կը մնամ ես, հոծ լուսնեան հեշտանքին  
 Բացած՝ հողոյս անցքերը լայն եօթնուղի,  
 Չայն մը կ'առնեմ. — Գամբռ մը հեռուն կը հաչէ,  
 Աստղերն ի վեր լայնակարկառ կլափն իր...  
 Կը սարսըռամ... երբ մը յետոյ կը ճանչնամ.

— Մարտէյեէ՛ղն է... — Անգոհ մ'հողիս կը սրտե՛.  
 Պատուհանիս փեղկերն ուժգին կը փակեմ,  
 Եւ մատուընէրս ամուր խցած ականջիս  
 Օ՛, մեծ մութին կ'ապաստանիմ զողանար...  
 Զի այդ Երզին մէջ այս գիշեր, ս՛վ սոսկում,  
 Սեւ բուերու վայիւններ

Եւ բորենեաց արիւնտաչ կաղկանձներ  
 կը լսեմ ես, որոնք հիմա դաշնակուած  
 Սա շունի ժանա հաչիւնին  
 Իմ էութիւնըս համակ  
 Կ'ասզնոտեն կ'արիւնեն...

2 Յուլիս 1920





Քու մեծ տօնդ է, Ֆըրանսա՛.  
Քու յաղթակերտ կամարներուդ ներքեւէն,  
Ուրկէ Կրքեմն Ազատութեան ժպտաշուրթն  
Հսկայ թախորն էր անցեր,  
Այսօր պոռոտ արբշըռանքի և շինծու.  
Խրախճանութեան սղտոր ալիք մը կ'անցնի...  
Ու իմ հոգիս որ քու ձայնիդ աստուածեան  
Հունչքին առջև լայն կը բացուէր, կը ժպտէր՝  
Այսօր դաժան դաշարումով մը երկար  
կը տուայտի, կը կծկի...:

Կուլամ զքեզ, Ֆըրանսա՛,  
Որովհետև կը սիրեմ քեզ տակաւին,  
Կը սիրեմ քեզ յակամայս,  
Որովհետև դո՛ւն էիր  
Ո՛վ Չատուկ կին, ո՛վ վհուկնի, ո՛վ պոռնիկ  
Որ արբունքի տարիքիս վրայ միամիտ  
Քու սընգուրուած գեղեցկութեամբըդ խարոզ  
Աստուածօրէն ազդեցիր...:

Ըսիր թէ դուն ազջիկն էիր հրաշագեղ  
Լոյսին, Յոյսին, Իտէալին՝ երազին,  
Թէ՛ քու վճիտ կողերուդ տակ կը խայտար  
Ամբողջ հաւատքն ազատատենչ մարդկութեան.  
Ըսիր թէ դուն անմահ էիր ու վսեմ,  
Թէ՛ ժան ա՛Սրքներն, Նարէ՛ծններն ու անոնց  
Հրատափառ փաղանդներն  
Օ՛, դո՛ւն էիր՝ որ ծնար.  
Թէ՛ դուն էիր ստրկութեան մահարոյժ  
Բաւիլներուն մէջ խարխափող մարդկութեան  
Աչքին առջև ազատութեան լուսապանծ,  
Լայնածաւալ հորիզոնները պարզող...  
Թէ՛ քուկըդ էր Ֆըրանսա՛

Այն միակ սիրտն որուն մէջ՝  
Բռնութեան տակ արիւն փսխող անտէրունջ  
Ժողովուրդներու կը կոտար ցաւը խորունկ...

— Հաւատացի ես քեզի,  
Ձի տակաւին կը լսէի ես յատակ՝  
Մօտ անցեալի ընդերքէն՝  
Կայծակնաւարս զաւկըններուդ խիզախումն  
Գահերու դէմ բռնակալ.  
Կը լսէի, այո՛, ես,  
Դարբը անոնց նժոյգներուն թաշարձակ  
Որ՝ նէվայէն Մաճէնտա  
Մաճէնտայէն մինչև Բուրդեր ու մինչև  
Հնդկաց աշխարհ ու Լիբանան կ'երկարէր...

Պատրանք չէր ատ, ո՛հ դո՛ւն էիր Ֆրանսա՛  
Որ սիրեցի ես հոգուոյս  
Ամբողջ թախովը ներոյժ...  
Ու կոչեցի, քե՛զ հայրենիք կոչեցի՝  
Մտածումիս, Իտէալիս, երազիս  
Անմահանուն հայրենիքն:  
Կը կարծէի թէ միտիս  
Երակներուս մէջ իմին՝  
Ասպետական զաւկըններուդ նոյն արիւնն  
Ու նոյն հոյզը կը շրջէր...

Քու ցաւդ, Ֆրանսա՛, սև խտովք  
Ու վիշաբք՝ սուգ, ատելութիւնա՛յ՝ փոթորիկ  
Կ'ստեղծէր մէջս .. ես կուլայի քեզի հետ,  
Քեզի հետ ալ կը ժպտէի լիասիրտ...  
Այսօր կուլամ, Ֆըրանսա՛,  
Երբ դո՛ւն արդէն կը տօնես  
Յաղթանակիդ Տօնը մեծ...  
Հոգիիս մէջ կայ փրկւողում մը անեղ,  
Բոլոր սէրերս, բոլոր յոյսերս ու հաւատքս



կորունկ խոցուած՝ կը մեռնին,  
 կուրծքիս վրայ ձեռք մը կ'ըլլամ երկաթէ  
 Որ կը ճնշէ, կը սրկէ  
 Եւ կ'սպառնայ զիս շնչասպառ տասպալել.  
 — Բու ձեռքդ է ան, ո՛վ սոսկում,  
 Բու ձեռքդ, քու՝ ձեռքդ, Մարխան...  
 Որ՝ վազբի սուր ճիրաններու պէս վայրագ՝  
 Ոսկորներուս կը մխուր...  
 — Ո՛չ դուն Ֆրանսան չե՛ս բնաւ.  
 Անմահներու, հերոսներու վեճերու  
 Անմահ Ֆրանսան չե՛ս բնաւ.  
 Կ'ատեմ գլեղ ու կը նողկամ ես քե՛նէ  
 Ո՛վ ցոփութեան դո՛ւն աղջիկ  
 Ո՛վ ծախուած կոյս, Սալումէ՛...  
 . . . . .

Ֆրանսա՛, Ֆրանսա՛, քեզի՛ եմ  
 Բեզի՛ քե՛զ, ո՛վ ճշմարիտ, ո՛վ վսեմ,  
 Ո՛վ անխարշախ Ֆրբանսա՛.  
 Դէմքըդ ցոյց տուր, քաղցըր տեսքիդ ե՛նք կարօտ  
 կարօտ ե՛նք քու ըսիտփարար խօսքերուդ:  
 Տե՛ս քու անուամբըդ ի՛նչ գարշ,  
 Ի՛նչ ժանտաժուտ ոճիրներ,  
 կը գործուին՝ անմահներու պալատին  
 Վէրսայլի յաղթ կամարներուն տակ ծմակ,  
 Երբ դուրսն Յուլիս 14ը կը տօնուի...:

Յիշէ՛, Ֆրանսա՛ թէ Սըրտանին վերջ ուրկէ  
 Փորուդ մարած՝ կորաքամակ դուրս եկար  
 Նոյն այդ շքեղ պալատին մէջ էր նորէն  
 Որ թշնամիդ՝ սուրբ գրած կոկորդիլ,  
 Բենէ խլեց Լօրէնդ անուշ գիրդ Ալգասդ.  
 — Յիշէ՛ թէ դուն ի՛նչ ուխտեցիր այն ատեն...:

... Ու հայ տղայ ես՝ այսօր՝  
 Բեզի՛ հանդէպ, Ֆրբանսա՛,  
 Նոյն այդ ուխտը, նոյն փոխվըրէժը կ'ուխտեմ...  
 Զի քու մարդիկդ՝ որ երբեմն՝  
 Ամհօրէն ըողոքեցին, ցցուեցան  
 Այդ անիրաւ արարքին դէմ ոսոխիդ,  
 Նոյն այն մարդիկըդ այսօր,  
 Ինէ, Ֆրանսա՛, կը կորզեն  
 Անխղճօրէն, անմտօրէն, վաժաօրէն,  
 Իմ հայրենիքս — որուն հողն է կազմուած  
 Իմ պապերու սուրբ անխնէն խաւ առ խաւ.  
 Ուր չէ՛ չորցած տակաւին,  
 Ուր կը մխայ՝ ամպ ամպ ճենճեր առ ճենճեր՝  
 Իբրև ըստաշխ քաղցրարքոյ,  
 Արիւնը իմ եղբայրներուս, ջոյրերուս,  
 Օ՛, թարմօրէն հեղեղուած...  
 Տաճար մըն է իմ հայրենիքս, Ֆրբանսա՛,  
 Տաճար մ'անուն աստուածեան,  
 Որուն մէջ քու հրէացած դաւակունքդ  
 Շահաստաններ կ'որոնեն,  
 Շահաստաններ մեծ, յուսթի...  
 Ի՛նչ հող, եթէ անոնք գնուին անանուն  
 Սաղբանքներով, նախճիրներով, դաւերով...:

Ու երբ այսօր, կամարներուդ ներքեւէն  
 Կ'անցնի թափօրը ծփուն  
 Յուլիսեան քու մեծ տօնիդ՝  
 Մարտէյեէզը երգելով,  
 կը սեղմուի բառնցքըս իմ, շրթունքիս  
 Երդ մը կուզայ վայրագ հուժկու ու մոսայլ,  
 Երդ մարիւնիս մէջէն ալիք առ ալիք՝  
 Վեր բարձրացած... — Երգն է այդ,  
 Հայ Որվանսիս երգն անկ...  
 14 Յուլիս 1919



Ա.Ի.Ա՛Ղ. ՓԱՌ.Ա.ՅՍ...  
—————

Ա.

Պիտի իյնաս Ծըրանսա՛,  
 Պիտի իյնա՛ս, անյետադարձ կործանուիս,  
 Թաւալգըլոր, քու բարձունքէդ՝ ուր զքեզ  
 Թե՛լ մը հաղիւ կը բռնէ...  
 Պիտի իյնա՛ս, կործանուիս.  
 Ճակատագրին անսպասելի, անյեղլի  
 Վճիւն է այդ... — Այդպէս ինկան Մեծ Հոռոմս,  
 Մակեդոնիան ու Նինուէն  
 Եւ ուրիշներ՝ ցոփութեան  
 Եւ շահագէտ ու վաշխառու ակորթի  
 Եւ կաշառքի մէջ խեղդուած, սպասած...  
 Պիտի իյնաս՛, որովհետեւ ուրացար  
 Ամբողջ անցեալդ. ու կոչումիդ եղար դուն  
 Խո՛ւլ. դաւաճան՝ լոկ անսալով վատախորթ  
 Բնազգներուդ, որոնք զքեզ հիւճեցին... :

Բ.

Ի՛նչ շուտ մոռցար, ի՛նչ շուտ, ի՛նչ շուտ Ծըրանսա՛  
 Այն օրը երբ՝ հիւսիսէն  
 Արժիւ մ՛հակայ, բազմազլխեան սև արծիւ մ՛  
 Ահագնօրէն խոյացած՝  
 Զարկաւ արլորդ յեղակարծ՝  
 Ու հողին վրայ թեւերն անոր ջախջախած՝  
 Փսխել տուաւ յորդ արիւն... :  
 Ինչ պէ՞ս մոռցար՝ որ դեռ երէկ քարուղուսյն  
 Վրայ փռուած՝ ընկեցիկի մը հանդոյն ,  
 Դուն գթութի՛ւն, օգնութի՛ւն  
 Կը մուրայիր ամեն անցնող ճամբորդէ՛,

Եւ հէքօրէն՝ արեւուն տակ տեղ մը լոկ,  
 Պատա՛ւ մը հող — զոնէ քու հին սահմանդ նեղ —  
 Կը խնդրէիր պաղատագին, լալաղին... :

Ամեն կողմէ չուշացան  
 Գեզ օգնութեան փութալու .  
 Որովհետեւ հաւտացուցիր դուն անոնց  
 Թէ՛ իրաւունքն, Արդարութիւնն , աշխարհի  
 Լոյսը պիտի քու պարտութեամբըդ մարէր...  
 Դուն երգուընցար , հազար երգում, հազար լաց ,  
 Թէ քու կռիւդ՝ Ազատութեան կռիւն էր,  
 Կռիւը սուրբ՝ քաղաքակիրթ մարդկութեան, —  
 Ու յաղթեցիր... Բայց չունեցար, Ծըրանսա՛,  
 Յաղթականի վեհանձնութիւնն — ըլլար այդ  
 Դոյզըն չափով — զի քու կուրծքիդ տակ շատոնց  
 Վոսո աւազակ մ՛իր սև հոգին էր գրեք...  
 . . . . .

Ու երբ դաշտերդ կը մխայրին սակաւին՝  
 Զաւկըներուդ արիւնով,  
 Երբ ցորենի ու խաղողի անդաստանքդ  
 Գերեզմաններ էին դարձեր նորափոր,  
 Գերեզմաններ ք գերեզմաններ անանուն...  
 Երբ գիւղերուդ քաղաքներուդ, շէներուդ  
 Աւերակին մէջ լոկ բուեր չարագոյծ  
 Կը թառէին, գիշերն ի բուն օրն ի բուն,  
 Երբ դարաւոր հրաշակերտները հակայ  
 Կոյս մը մոխիր և կրացած շեղջ մը քար  
 Էին դարձեր — որոնց մէջէն կը քալէր  
 Փառքն անցեալիդ կորաքամակ վիրաւոր  
 Ողջ իրանէն արիւն և ուղ թորեւով —  
 Երբ, Ծրանսա՛, վատասեռած ո՛վ դուն ալդ,  
 Անութներուդ մտած ճօն Պուլն, Ընքըլ Ա՛մ  
 Ո՛հ, հաղիւ հող կը բռնէին քեզ



Դուռն ձեռուընկերդ երկարած կ'ուզէիր  
Միշտ կ'ուզէիր, անյագ ազահ ու ծակա՛ջք,  
Ինչպէս կ'ըլլան շատ հիւանդներ վատառողջ....

Գ .

Կը տեսնեմ քե՛ղ , Ֆըրանսա՛ ,  
Հիմա փլած՝ ածիւնին վրայ քու փառքիդ,  
Դաւուկ արմոյն, կենսադըրու ու լքուած...  
— Կործանուեցար... զի դուռն, չքնա՛ղ այջընակ,  
Քու շքնորհէդ շփացած՝  
Բողնոցին մէջ ծախեցիր  
Կուսական զեղըդ համբուն... :

Անկումդ անեղ է չեմ կրնար ես երբեք  
Խորաչափել անհունութիւնը վշտիդ.  
Բայց կը տեսնեմ որ յիշատակն անցեալի  
Քու մեծութեանդ, կուգայ քեզի յարձակիլ  
Քու դահանգիչ լքումիդ մէջ մեհաւոր...  
Եւ այն ատեն՝ վայրահակ  
Ճակտիդ վրայէն կուգայ սահիլ ողջ սարսափն  
Ոճիրներուդ, սե գիշերի մը հանդոյն... :

Ժպիտ մը մերթ դատան՝ խորչեր պեղելով՝  
Կը փոթփոթէ գէմքըդ քու.  
Կը հասկընամ . — անցեալի հոծ մշուշներուն ընդմէջէն  
Դուռն կը տեսնես գերբնական վազքն ահարկու  
Քու երբեմնի քաջերուդ,  
Որոնց զինուց չկահիւնին հեռալուր  
Դաշնակութիւնն՝ փառքի ճաճանջ մը նրբին  
Կը ցաթէ քու խաւարամած ճակատիդ...  
Սակայն, որքան վաղանցուկ...  
Ան կ'անհետի ու դուռն կ'իջնաս նորէն սե  
Խոհերուն մէջ անկումիդ...  
Զի կը տեսնես, հոն, յանկարծ

Աւարն, էնթրիկն ու կողոպուտն անիրաւ  
Որոնք արեամբ կը դրեն՝  
Կեանքիդ Գրքին մէջ հինցած՝  
Կործանումիդ վճիռն անեղ ու անպարճ...  
. . . . .

Օ՛ , փառաւոր էիր, Ֆրանսա՛ , դուռն երբեմն,  
Պատկառազգու պերճաշուք  
Ու կարծեցիր թէ կը ջնջէ, կը ծածկէ  
Փառքը ամեն ոճիր, ամէն դաւ ու նենդ,  
Ամեն ստոր վատութիւն...  
Բայց ճակտիդ վրայ, սա՛ արեան բիծը կարմիր՝  
Որ՝ Սիհունի ափերուն վրայ յոշտած  
Անմեղ զոհէդ կը մնայ,  
Անջնջելի է, աւա՛ղ... :  
Գերազոյն ձեռք մը զանի  
Հո՛ն զարկած է ինչպէս կ'նիք մը անեղ,  
Եղերական զերդ պսակ...  
Զուր մի՛ փորձեր զայն ջնջել.  
Քու ջգածիդ մատներուդ տակ ան նորէն  
Դուրս կը ցատկէ, ո՛հ, աւելի կարմըրած... :  
Զուր մի՛ փորձեր զայն ջնջել... :  
Հիմա, Ֆրանսա՛ , քեզ գիտել անկումի

Վիճակիդ մէջ ողորմուկ,  
Կը կասկածիմ նոյն իսկ  
Անցեալ փառքիդ, վեհանձնութեանդ, հանճարիդ  
Ու տարփողած իտէալիդ սրբութեան.  
Զի քու կեանքիդ մեծ կառաչարն իր անցքին  
Վրայ թողած է կարմիր գիծ մը որուն  
Ծայրն, ըսկսած տափաստանէն Տաւրոսի՝  
Լայն կ,երկարի Լիբանան  
Լիբանանէն մինչև Հոննոտ, մինչև Մէօղ...  
Լ'աշխարհ անճառ պակուցումով մ'համակուած



Քեզ կը դիտէ. մտածելով՝ թէ որքան  
 Մեծ էիր մերթ, ու որքան  
 Որքան, սակայն, փոքր ես եղեր իրապէս...  
 Ֆրանսա՛, Ֆրանսա՛, ո՞վ մեծ Անկեալ, ո՞վ չար Կին  
 Երազներու, պատրանքներու յոյսերու  
 Եթերածոյլ, աստղաքսնդակ սափորէն  
 Օր մը ըմպեց՝ սա մարդկութիւնը խորո՞ւ  
 Քու Մեծութեանդ ստութիւնն.  
 Ու գինովցաւ, ծափահարեց քեզ ուժգին...  
 Բայց եկաւ օր մ'որ դո՛ւն, Ֆրանսա, ցոյց տուիր  
 Թէ մեծ չէիր հոգիով.  
 Թէ՛ դուն կախարդ մ'էիր նենգ  
 Ծիւլած հիւժուած, փճացած.  
 Կողերուդ տակ ջուր էր կտրեր կեանքի սազմն,  
 Ու՛ ճնունդի անասակ՝  
 Ուզեցիր որ օտար մօրմէ ու օտար  
 Հոյզէ ծնուլ քաջ պարմաններ բռնավար՝  
 Գան քեզ բռնել քու գահոյքիդ վրայ բարձր...  
 Փըլաւ ան, վա՛խ, Ֆրանսա  
 Ու դուն ինկար՝ թաւալվոր տապալած...  
 Եւ ձեռքիդ մէջը հիմա՛  
 Անուն մը լոկ ու փառքիդ  
 Պաղ մաղմաղը կը մնայ,  
 Որոնց վրայ՝ ամեն անգամ որ իյնան  
 Աչքերդ քուկին, ես կը տեսնեմ, որ ճակատէդ  
 Կ'անցնի ստուեր մը մռայլ,  
 Եղերաշուք շիրիմներու անիծեալ  
 Վրայ յածող՝ հո՞ծ ստուերի մը հանգոյն...  
 Ու կը լսեմ, այն ատեն,  
 Որ դուն կ'ուլաս՝ աւերներու մէջ լացող  
 Զբոյ ուրուական մը դժխեմ...  
 — Լա՛ց, լա՛ց, Ֆրանսա՛, արժանի ես քու նսե՛նդ... :

Յաղթանակն է... Հորիզոնէ հարիզոն  
 Շեփորներ գոռ կը հնչեն.  
 Եւ մարդկութիւնն՝ որ չորս տարի եղեա՞նին  
 Ստուերին տակ էր ապրեր՝  
 Անհուն խինդէն կարտասուէ:

Խաղաղութիւն... Ու տօ՛ն է.  
 Խորտակուած են Չարին բոլոր պատնէշներն-  
 Աշխարհն ազատ, և ազատ են ազգ ազինք.  
 Մարդասպանները տփռոյն,  
 Սարսափահար, իրենց ձեռքի դանակներն  
 Գաղտօրէն վար կը ձգեն,  
 Հողին վրայ, ուր կը պռակին դեռ իրենց  
 Զոհերն անմեղ, գազանօրէն փողոտուած... :

Կը բացուի այգը սսկի՛  
 Երկարօրէն տենչացուած,  
 Քաղաքներու և գիւղերու վրայ՝ ուր  
 Կեռայ արիւնն մ'անուկներու կիներու,  
 Զգուած այնտեղ շեղջ առ շեղջ...  
 Ու կը տեսնեմ ես, ո՞վ տէր,  
 Անոնք իրենց շրթներուն վրայ կը խածնեն  
 Անէ՛ծք մ',աւա՛ղ, չզուրցուած  
 Եւ խեղզուած բողոք մ'հետս...  
 — Պիտի լսուի բողոքն այդ,  
 (Այդպէս կըսեն յաղթանակի Բանուորներն)  
 Հատուցումի ժամն է աս...  
 — Ու Պէրլինէն Վիէննա  
 Վիէննայէն Պուտաքիշտ  
 Եւ Սօֆիա, Սթամպուլ  
 Կը սաւառնի սարսափն յայնքո՞ւ մեծ որքան  
 Մեծ էր գործուած ո՞վքո՞ւն արդէն

10833-5-2





Կեանքը արդէն կը խլրտի ամեն զի,  
 Նոր յոյսերով նոր տենչերով սրարփուն...  
 — Ու կը տեսնեմ հայրենի  
 Ճամբաներուս երկայնքին  
 Մեծ եղբայրներ՝ սառսպանքին տակ կը քած,  
 Քոյրեր՝ նիւծուած, ուրուայլին,  
 Պարմանիներ՝ արմոյն, խողոռ նայուածքով,  
 Կոյսեր՝ արդէն մայր եղած.  
 Եւ մանուկներ՝ մահուան դալուկը հագած...  
 Անոնք կուզան զանդաշուն  
 Ճամբաներէն եղեռնի,  
 Իրենց երգիքը կանգնել  
 Մոխիրներու վրայ տաք  
 Զոր եռագոյն մը հիմա  
 Կը հովանէ, յաղթապանծ...  
 Բայց, ահա, օր մը յանկարծ  
 — Փետրուար օր մը սև —  
 Ոճիրը ժանտ կը ցցէ  
 Իր եղջիւրները կարմիր.  
 Կը բլքտուի եռագոյնն յաղթ. կը նետուի  
 Յիսերու մէջ՝ հայ արիւնով շաղախուած.  
 Մինչդեռ տէրերն այդ եռաշերտ սրաստաւին,  
 Որ վէրսէօններ կանգնեցին,  
 Մութին մէջէն կ'որոնեն  
 Զայն պատուող պիղծ ձեռներն՝  
 Եղեռնապարտ սակարկութեան մը համար...:

Ու կը հոսի ցեղիս արիւնը նորէն՝  
 Կոհակօրէն, ուղխօրէն.  
 Սուրի, հուրի, կատաղանքի, խաւարի  
 Դաշնակցում մը կը կազմուի անոր շուրջ...  
 — Կը փեռեկաի մոնկոլ հոգին ամբողջ իր  
 Գեհնասարս կտղուցքով:

Կը ճարճատի, կը ճեղքուի, կը փշրուի  
 Եւ զայրոյթի պատասնեբու պէս՝ ան վեր,  
 Վե՛ր կը թռչի, երկինքն ի վեր, ու ապա՝  
 Դաշտերուն մէջ, ձորերուն մէջ կը սուզի  
 Ինչպէս նաժայ մը կատաղած.  
 Ու կը ֆըշայ... Ո՛հ այդ պահուն ամեն բա՛ն,  
 Օ՛, ամեն բան կը շարժի —  
 Պիտ՛ ըսէիր արհաւիրքէ՛ խաճոտուած  
 Հորիզոններն ամբողջ, ամբողջ կը քայլեն...  
 Ու միջոցին մէջէն կանցնի վերջին մեծ  
 Դատաստանին հըրաւիրող Գարբէլեան.  
 Սարսըռագոջ աղաղակն...:

Ես այն ատեն զահանգումով կը դիտեմ  
 Իմ մայրենի սուրբ հողիս  
 Ակօսներուն մէջ ծփուն՝  
 Բռնակոշկոճ եղբայրներուս ուղն ու ծոճ,  
 Մէյ մ'ալ, մէյ մ'ալ վայրալատին ճեղեղուած...  
 Ու կը տեսնեմ անոնց ճակատն արփազեղ  
 Փըշըբըւած քարին վրայ իրենց տան՝  
 Տապարներու հարուածներուն տակ վայրագ...:

Մինչ մութին մէջ, կը լսեմ,  
 Պայծառափող մ'(որ գուցէ  
 Մերթ հնչեր էր դու Մարսէյեղը.) արդէն  
 Կուտայ հրամանն եղեռնադաւ նահանջին...  
 Ի տես անոնց ես իմ աչքերս կը փակեմ,  
 Եւ հոգիէս կ'անջատուի  
 Անձկութեան ճիչ մը հզօր,  
 Որուն կատնեմ ես արձագանգն հետուէն.  
 — Օ՛ մատնութիւն, մատնութիւն...:



Նոր կոտորած... — Ու մահազանգն այս դժխեմ  
Կիլիկիոյ արծուերնակ սարերէն  
Մեզ կը հասնի անգամ մ'ալ...

Նոր կոտորած... — Տասնեակ հազար եղբայրներ  
Մէյ մ'ալ կ'իյնան դանակին տակ Ոճիւրին,  
Այն քաղքին մէջ ուր — մահու  
Անդոնական գիշերներէն վերջ երկար —  
Հայ կեանքն հազիւ խայտալ, շարժիլ կը ժտէր՝  
Զինք սպանով կարծելով  
Եռագոյնի մ'ստուերին տակ յաղաթածուի:

Նոր կոտորած... Ո՛հ, ես խաչուած հաւատքիս  
Մէջ՝ անգամ մ'ալ խոցոտուած՝  
Ըզքե՛զ, ըզքե՛զ կամբաստանեմ, Ֆըրանսա՛,  
Զի քու հոգիդ ստոր Շահէն պղծըւած  
Ծնաւ եղեւնն այս նորոգ:

Նոր կոտորած... Դիտէ՛ Ֆրանսա, անոր մէջ  
Փառքիդ հնձանն է տապալած, ուրկէ դուրս՝  
Կանանչ մաղձի մը հանգոյն,  
Գեղեցկութիւնդ ու մեծութիւնդ կը թորի:  
Անոր վրայ կը նային  
Օ՛, դարեր հին, դարեր խարուած հմայքե՛դ՝  
Պատելով ճակատնին...

Նոր կոտորած... Այս արիւնին համար նոր,  
Ո՛հ, ես ըզքեզ կամբաստանեմ, Ֆըրանսա՛,  
Զի դուն ինծի եկար իբրև բարեկամ  
Իբրև պաշտպան... Ու զինեցիր դաճիւս ձեռքն:

Որ զիս զարնէր կռնակէս...  
Եւ դուն անոր քաջութեան  
(Որ քանդումի իր բնաղղէն դուրս կ'ոսանու)  
Առջև, այո՛, գոհ անշուշտ,  
Դիւայնորէն ժպտեցար՝  
Դաւդ յաջողած կարծելով...

Բայց չէ՛, բայց չէ՛, Լի՛ Ֆրանսա՛, սարսափէ՛,  
Յեղիս՝ զոր դուն իր արեան մէջ էքեցիր,  
Կամքին անեղ աղաղակն.  
Պիտի սպրի՛ անիկա՛  
Մահը պարտած ու բղքտած սև նսեհն,  
Պիտի սպրի՛ քեղի գէ՛մ  
Ամեհօրէն ծառայած՝  
Ամբաստանանք մը ինչպէս:

Տե՛ս սա քաղաքը, Ֆրանսա՛, —  
Ուր թոյլ տուիր որ հասի  
Արիւնը ուղիս մանուկներու կիներու,  
Ուր սև խուժանը թքաւ  
Կոյտին վրայ զիակներու շեղջուած,  
Ուր անթի շան վոնմակներ լիզեցին  
Փորտիքներ մարդկային,  
Ուր գանկերէ՛ դուրս պոռթկացող ըզեղներ  
Մզկիթներու պատերուն վրայ կը սպաղին,  
Ուր դահիճներն սրբած են  
Արիւնն իրենց մասներուն՝  
Տաճարներու խաչքարերուն մարմարեայ. —  
Տես այդ ամենն, այդ ամենն  
Ըզքեզ միայն կ'ամբաստանեն Ֆըրանսա...  
Ու սա գիակները կանգուն՝  
Ստուերուն մէջ, իբրև սաշի կտորներ,  
Յուրտէն հաշմուած բազուկներն



Ու սրունքները կանանց  
 Որ հո՛ն ձիւնին մէջ կը մնան դեռ ցցուն,  
 Եթէնքին կողը մխուած՝  
 Բողոքներու պէս դաժան,  
 Ըզքեզ ըզքեզ կ'ամբաստանեն Ֆրբանսա՛... :

Ու չե՛ս լսեր միթէ դո՛ւն  
 Սրտակեզ հեծքը անոնց՝  
 Որ անա քեզ կը հետեւին մերկ, նօթի,  
 Խուճապահար, կոյր ոճիրէն հալածուած, —  
 Օ՛, քիչ մը գուժ պաշտպանութիւն մ'հայցելով՝  
 Գու հանանջող զինուորներէդ ասպաղէն,  
 Եւ զոր սակայն կը զլանան տալ յաճախ... :  
 Դուն չե՛ս լսեր ձիւնի անեզ մըրիկին  
 Մէջ խեղզըւող հանդիւններն օրհասի... :  
 — Անոնք ըզքեզ կ'ամբաստանեն Ֆրբանսա՛... :

Եւ հապա սա ապառաժները կարկառ  
 Որոնց վրայ կը վառին  
 Արիւնն ու սպանդն անարկու... :  
 Դիտէ՛ զանոնք, այդ վիթխարի ժեռ քարերն —  
 Անոնց կուրծքին ձեռք մ'անտես  
 — Ճշմարտութեան ձեռքն է այդ —  
 Իր պողպատեայ եղունգով՝  
 Խոր կը փորէ մեղսակցութիւնդ, Ֆրբանսա՛,  
 Ոճիրին հետ հրէշային... :

Ու դիտէ՛ դեռ, դիտէ՛ դո՛ւն,  
 Յեղիս արիւնն, որ շիթ առ շիթ կաթելով՝  
 Գու Պատմութեանդ այս օրուան  
 Էջերուն վրայ, կը գրէ  
 Ոճրագործի դատանիքդ զոր ոչինչ  
 Եւ ոչ մէկ բան պիտի կրնայ ա՛լ ջնջել... :

Ֆրանսա՛, Ֆրանսա՛, մտիկ ըրէ՛, մի սարսուար,  
 Հայ աշխարհի մէկ ծայրէն միւսն արշաւող  
 Սա մըրիկները բոլոր —  
 Հոն ամեն ձիւկ, ամեն շուռնչ, ամեն ձայն  
 Բողոք մըն է քեզի դէմ.  
 Այնտեղ ամեն հիւլէ, ամեն տարր իր մէջ  
 Կը խտացնէ անէծք մ'հայրուչքմ հողեհան... :

Ես ալ զաւակն այդ աշխարհին նահատակ  
 — Որուն կարմիր արիւնշաղախ սուրբ հողէն  
 Անուած է կաւն հասակիս ազազուն,  
 Որուն հովերն են տուեր  
 Իրենց կշռոյթն իմ քընարիս լարերուն,  
 Եւ որուն սե սարսափի  
 Գիշերներուն մէջ հողիս  
 Թափառական, լսեր է՝  
 Ատելութեան վէպն անեզ  
 Արիւն հոսող գետերէն —  
 Այս օր, Ֆրանսա, ես լիաթոք կը շնչեմ  
 Ատելութիւնը զոր դուն  
 Չոյգ ամերովդ նետեցիր  
 Հայրենիքիս հովերուն մէջ, հողին մէջ... :  
 Արիւնս վրէ՛ժ կը ճչէ  
 Եւ անծանօթ կատաղանքէ զինովցած  
 Մարդու մը պէս ցասմնակոծ,  
 Ատելութեան այդ հովերուն մէջ կանգուն,  
 Շրթանցս վրայ ծամելով՝  
 Հայրոյանքի փրփուր մ'ուղիս,  
 Ըզքե՛զ ըզքե՛զ կ'ամբաստանեմ Ֆրբանսա՛... :



ԱՆԷԾՔ ՔԵ՛Չ, ԱՆԷ՛ԾՔ

Անէ՛ծք, Ֆրանսա՛, անէ՛ծք քեզ,  
 Իմ հոգիիս մոլեգնութեամբն անէ՛ծք քեզ.  
 Անէ՛ծք Անուանդ, անէ՛ծք սնանկ Համբաւիդ,  
 Անէ՛ծք Փառքիդ, որուն վրայ կը թքնէ  
 Սև Բորենի մը զոր գուն  
 Գրկիդ սեղմած՝ ստեւն անոր կը շոյեմ՝  
 Եղբայրօրէն ժպտելով...:

Կը տեսնեմ ես, մութին մէջ,  
 Դժնէօրէն վառող աչքերը ձերին,  
 Որոնք իրար կը յառին՝  
 Նոյն տենչանքով, նոյն տարիանքով գիւային,  
 Անոնց խորքին, ո՛վ սոսկում,  
 Կ'իժախոնուի նոյն ոճիրին բոցն ահեղ.—  
 Դուք իրարու ակնարկին  
 Մէջ, ո՛հ, զիրար կը գիտէք:

Անէ՛ծք, Ֆրանսա՛, անէ՛ծք քեզ,  
 Զի դուն էիր որ դարչելի եղեռնին  
 Կարմիր բուռնցքը քակած  
 — Ուր Յաղթանակն օր մը մեծ  
 Զիթեհոռոյ ճիւղ մ'էր դրեր —  
 Սահեցուցիր դաշոյն մը նոր, որով ան  
 Մէջ մ'ալ դարկաւ զիս ուժգին.  
 Եւ իմ արիւնս, պայծառ արիւն հերոսի՛,  
 Երկիրքն ի վեր հիմա ցայտքով մ'ամեհի  
 Բու վառութիւնդ կը պատմէ,  
 Բու դաւճ՝ Ֆրանսա՛, քու նենգութիւնդ՝ աշխարհիւ  
 . . . . .  
 Օր մը — անէ՛ծք այդ օրուան —  
 Ես էի որ քընարիս

Հարերուն վրայ խանդաբորբ,  
 Բու մեծութիւնդ տաղեցի,  
 Ու զինուորիդ դիւցադնութեամբն արբեցած՝  
 Անոր փառքը երգեցի...  
 Ես էի որ՝ մոռցած իմ խկ նսեհիս  
 Դամբանական սեւութիւնն՝  
 Բու նսեհովդ հնչնացի, տանջուեցայ  
 Ու սև արծուին մագիլներէն պատառուած  
 Եռագոյնիդ մէջ տեսնել ես կարծեցի  
 Դաշունահար վսեմ հոգին մ'արդիութեան...  
 Սո՛ւտ է եղեր, խարկանք, աւա՛ղ, այդ ամենն,  
 Զի կը տեսնեմ ես նոյն դրօշն, որ հիմա  
 Ստամպուլի նկուղներուն վրայ կանգուն՝  
 Կը հովանէ զարշութիւններ անանուն...  
 — Մեղա՛յ, մեղա՛յ հին մեղքերու համար իմ.

Անկումի ի՛նչ պատկեր է ան, Ֆրբանսա,  
 Վատասերման ի՛նչ սահմուկիչ տեսարան,  
 Պղծումի ան ի՛նչ ժանտաժուտ արշաւ էր  
 Որ՝ մայրութիւնըդ լլկած  
 Ծնունդ տուաւ այժմու վիժուած սերունդիդ:  
 Ո՞ր չարաղէտ գիշերին մէջ յղացար,  
 Ըսէ՛, Մարիան, քու զաւկըներդ այսօրուայ,  
 Որոնք քանդած իտէալի բոլոր պերճ  
 Կուռքերն, անա, ոճիրին հետ ձեռք ձեռքի  
 Սև օձերու հանգունակի՝  
 Կը սողոսկին բաւիղներէ նեխաբոյր...  
 Շահու զգայութիւն և մեղաւոր պապակէն  
 Շրթներն անոնց կանանչ փրփուր է կապեր,  
 Զոր կը թափեն իմ վերքերուս վրայ բաց՝  
 Թոյնի մը պէս մահառիթ...

Օ՛, Մատնութեան ու Զարիքի ու Դաւի



Ի՛նչ խժալուր թո՞հ ու բո՞հ է որ այսօր  
 Կը լեցնէ Պուրպոնեան  
 Շքեղաշուք այն դահլիճներդ ուրկէ մերթ  
 Կը նըչուէր Այատութեան լուսարփին,  
 Ստրկութեան սեւ անուրին ասկ հեծող  
 Ժող՛վուբոցներու վրայ հէք...:

Անգղերներու հողիով  
 Եւ ագռաւի մագիլներով ես տնժողոյն  
 Մարդեր կ'տեսնեմ, Ֆըրանսա՛,  
 Որ այսօրուան քու Պատմութիւնդ կը գրեն,  
 Մուրճ՛վ, մուրճ՛վ կը գրեն...:

Բռնէ՛, բռնէ՛ ձեռքերն այդ,  
 Ազնիւ Ֆրանսա՛, եթէ կապրիս տակաւին—  
 — Չեմ հաւտար թէ երակներուդ մէջ խապառ  
 Յամքեր, չորցեր է յետին  
 Կաթիլն անգամ, ո՞հ, քու հին  
 Դիւցազնական արիւնիդ...  
 Բռնէ՛ Ֆրանսա՛, բռնէ՛ ձեռքերը անոնց  
 Որոնք դամբանդ կը փորեն  
 Բարոյական սև դամբանդ...  
 Յցուէ՛, Ֆրանսա, ասպաղինուէ, մ՛ռնչէ՛  
 Թոթուէ՛ գլուխդ հրաբաշ  
 Ու թո՛ղ կարմիր կատաղութիւնըդ սլայթի  
 Անոնց գլխուն՝ այդ քու խորթ  
 Զաւկըններուդ որոնք անցեալդ կ'ուբանան.  
 Եւ վեհապանծ քու Պատիւդ  
 Կը սակարկեն արծաթով...  
 Ֆրանսա՛ Ֆրանսա՛ շանթանարէ՛ զանոնք շո՛ւտ...:

Հիւսէ, հիւսէ՛ ծեր ոգնիի կաշիով  
 Հաստ խարազան մը հիւսէ

Ու ծակծկէ անոնց եզկոտ մարմիններն,  
 Որոնց մէջ քու անապակ  
 Արիւնդ չէ որ կը շրջի.  
 Ու զուր՛ վանէ՛, քու սուրբ հողէդ զուրս վանէ՞  
 Հրէսցած այդ փերեղակները բոլոր...  
 . . . . .

Դուն չես լսեր, Ֆըրանսա՛.  
 Դուն կը լսես, չես ուբանար դուն զանոնք,  
 Մա՛յր ես, գիտեմ, մա՛յր սղծըւած շիլ Շահէն,  
 Ընկեցիկներ՛ր ծնած մայր,  
 Որոնք քու լոյս զաւկըներըդ խեղդեցին  
 Ու խըմցուցին քեզ գինի,  
 Ոսկի փարչով սղտոր գինի, որուն մէջ  
 Խառներ էին հարէմներու մէջ աճող  
 Տրփագրգիւ ողկոյլներու դիրտ հոյզէն.

Ու այդ օրէն դուն զարձար  
 Հոմանունին փնտուած,  
 Փաշաներու, սէյերու,  
 Որոնց հիմա դուն կը ժպտիս լիասիրտ,  
 Զի միսիդ հեա քու հողիդ ալ ծախուած է:

Ու իմ արիւնս, արի՛ւնս արդէն կ'ընդվզի  
 Ի տես աթէ քու անվերականդ անխումբի.  
 Ու բոռնցքս վեր, երկինքն ի վեր ցցած սլիրկ,  
 Խաչուած անմեղ հաւատքիս  
 Պաղ գիակին առջև կանդուն, թոքերուս  
 Ամբողջ ուժով՛ կատաղօրէն կը ճչեմ.  
 — Անէ՛ծք, անէ՛ծք ծախուած քո՛յր  
 Անէ՛ծք Մարիան, անէ՛ծք քեզ...:

27 Մարտ 1920



# ԱՊՍՏԱՄԲ ԽՅՈՒՔԵՐ

## Մարդկութեան խղճմանքին

Ա.

Դուն կապրի՞ս դեռ, կը բարախե՞ս տակաւին.  
 Իտէալին, Ասպետութեան ու Գուլթին  
 Պայծառ հոյզէն կաթիլ մը գէթ կը մնայ  
 Քու մէջդ, ըսէ՛, ո՛վ մարդկային խղճմտանք.  
 Եթէ.— այո՛, — ուրեմն լսէ՛, լսէ՛ զիս,  
 Լսէ՛ զիս՝ որ յուսալքէս կը գտնամ  
 Ուրացումին ու Մատնութեան ու Դաւին  
 Ճամբաներէն մահամութ,  
 Ուր իմ ցաւերս ես իբրև թոյն խմեցի  
 Եւ լռեցի կատաղանքս,  
 Եւ զոր հիմա պոռթկալ կուզեմ ես քեզի.  
 Կուզեմ պատմել՝ ինչ որ տեսայ ես այնտեղ...

— Ո՛հ, ես տեսայ օրէնքներուն մէջ մարդուն  
 Բիւր ոճիրներ կանդուն վեա,  
 Փառքի իբրև կոթողներ,  
 Որոնց մռայլ սլատուանդանին վրայ իսկ  
 Շահը նստած՝ կը սրէ  
 Մարդախոշոշ լայն դանակները դուլցած:  
 Տեսայ ես հո՛ն, անցքիս վրայ, — ո՛վ անկո՛ւմ—  
 Հին ասպետներ՝ ներքինացած, իզայած,  
 Ձիջած նոյն իսկ՝ սարկօրէն կրելու  
 Մարդասպանին կապարճներն.  
 Եւ իտէալի դրօշակիրներ կեղծաւոր՝  
 Որոնք ծախած են արդէն  
 Խղճմտանքները իրենց...  
 Տեսայ, տեսայ, մարդկութիւն  
 Մարիանոյ քու՝ աստուածազեղ այդ աղջիկդ,

Որ զիցունուոյ առաջատարն մէջ (ուր ա՛յ  
 Մերթ զիեցուց իտէալի զիւցաղներ)  
 Հիմա խենչէ վճարողներ կընդունէր...  
 Հապա խրոխտ Ալպիոնդ  
 Եւ Իտալիադ շնորհալի,  
 Նոյն իսկ Ընքըլ Սէմդ օրհնեալ՝  
 Որոնք ազնիւ գաղափարի ամեն ձայն  
 Լռեցուցած իրենց մէջ,  
 Կը խնկարկեն սակի Հորթին, վատ եսին...  
 — Ալ ի՞նչ մնաց հին հմայքէդ Մարդկութիւն.  
 Ըսէ՛ ըսէ՛, ի՞նչ մնաց... .

Բ.

Մ՛ւլթ է, մ՛ո՛ւթ է... Յեղիս արեան ազազակն  
 Կը խենթեցնէ զիս, ո՛վ տէր.  
 Ատելութեան տենդ մ՛ահեղ  
 Կը գալարէ իմ բովանդակ էութիւնս,  
 Ու բտունցքներս պատերուն դէմ փշրելով՝  
 Սուգի թանձր հորիզոնին մէջ ուժգին՝  
 Կը հնչեցնեմ անձկութիւններս անարկու  
 Մահազանդի մը հանդոյն...  
 — Ոչ ո՛ք, սակայն, ա՛հ, ոչ ոք զիս կը լսէ...

Ես չափեցի սնանկն ա՛հեղ մարդկային  
 Խղճմտանքին գոսացած...  
 Ու անոր դէմ կ'ընդվզիմ  
 Ո՛հ, անոր դէմ կը ճչեմ  
 Ես իմ նողկանքս, ես իմ ցասումս ու զայրոյթս...  
 Ես անոր դէմ կը գոռամ  
 Ամբողջ բողոքս՝ իբրև մարդ,  
 Իբր անդամ՝ մեծ Ընտանիքին մարդկութեան.  
 Ու զբահուած՝ անմահ ցեղիս Թորգոմեան,



Առհաւական հպարտութեամբն աննըւած,  
 Չեաներս՝ որ մերթ կրեցին  
 Ոսկի քնար մ'եօթնաղի,  
 Արդ ոճիրի գործիքներուն կ'երկարեմ...  
 Ես ինքիրմէս դուքս եմ արդէն. կը վազեմ  
 Դէպի վայրագ կոչն անդուսպ  
 Տարերային զայրոյթին,  
 Որ՝ բոցեղէն ու Կոչուաչ հունչերով՝  
 Դուքս կը ժայթքէ արիւնէս...

— Ես ամբոխին կը դիմեմ.  
 Այդ անանուն, այդ անծանօթ հակային,  
 Որուն պարզակ հողին դեռ  
 Չէ պղծըւած Շահին ժահրոտ հպանքէն.  
 Անոր ծոցէն, կը հաւատամ, պիտ յառնեն  
 Ասպեաներ մեծ հողիով՝  
 Պատուախնդիր մարդկութեան  
 Լղրճուած հին անունին...

Ներկան կեղծիք ու նե՛նդ ու դա՛ւ է համակ.  
 Զօրաւորներն աշխարհի  
 Ոյժն իրաւունք, սարսափն՝ օրէնք են ըրեր.  
 Ու իրենց խորիս հողիներուն մէջ խեղդած՝  
 Ամեն վսեմ խա՛ւալ՝  
 Սուրբ բառերու մոլորութեան տակ կը ծածկեն  
 Անասելի ոճիրներ...

Յնցուէ՛, ցնցուէ՛, ո՛վ նահատակ մարդկութիւն.  
 Ա՛լ հերիք է որ կրես  
 Անուանդ եղած այդ անարդանքն ապիրատ,  
 Ա՛լ հերեք է որ կրծես  
 Խիղճըդ կապտող պիտ շղթաները ժանգոտ. —  
 Յնցուէ՛, ցնցուէ՛, ոտքի՛ ել,

Եւ ցատումի անեղասատ հարուածով՝  
 Փշրէ՛ զանոնք, վա՛ր նետէ...:

Եթէ կարմիր պարարտարուտ պէտք է դեռ  
 Գաղտնիարի ատոք հունձքին համար գէջ,  
 Եթէ այո՛, անհունօրէն սիրելու  
 Համար, անհուն ատելութիւն պէտք է դեռ,  
 Եթէ բաւ չէ... ու նոր զոհեր պէտք են դեռ  
 Արդարութեան բազինին,  
 Եթէ, կըսեմ, խենթութիւն  
 Ու ընդվզում և կողուցք  
 Պէտք է՝ ստրուկ հողիներու համար, զե՛ն,  
 Մարտահրաւէրն հնչեցո՛ւր,  
 Եւ ամբոխներ՝ ծովերու պէս մռնչող՝  
 Ոտքի կենան թո՛ղ նոր աշխարհը վարող  
 Օրէնքներու շուրջ վսեմ...:

. . . . .

Բայց ես արդէն կը լսեմ  
 Չայնե՛ր, ճայնե՛ր ամեն դի,  
 Չայնեք վայրագ, աղաղակներ աւերիչ,  
 Ուր զայրոյթ կայ, փոթորիկ կայ, խռովք կայ.  
 Ուր կ'եռեփի տարերային հըրբաւղիս  
 Մ'որ պիտ պոսթիկայ վերջապէս...  
 — Մարդկութեան խիղճն է ատի  
 Անգթօրէն խոչտանդուած,  
 Որ կարթննայ դրդամբ...  
 Ու ո՛չ մէկ ոյժ, ո՛չ մէկ սաղբանք ու սարսափ  
 Պիտի կրնայ զայն զսպել.  
 Ո՛չ մէկ տժգոյն զիւանագէտ, ո՛չ մէկ սաստ  
 Պիտի կրնայ կասեցնել խորտակել  
 Խոյանքն անոր զէ՛պ սեղանի յարմարակ...  
 Ան պիտ զարնէ, ստոպարէ...





Շահով կուրցած մեծ ու պզտիկ անիրաւ  
Դատաւորները բոլոր,  
Որոնք, աւաղ, անարժան  
Գտնուեցան մարդկութեան վեհ անունին...

Տիեզերքը օրէնք մ'ունի, տէր մ'ունի.  
Բարոյական իրաւագիրք մը վսեմ,  
Զոր՝ մարդկութեան արթնցող խելճը ըմբոստ՝  
ժամանակի փոշիներէն հանած դուրս,  
Պիտ' պարզեւէ աշխարհին...  
Եւ այն ատեն իրաւակարգ մը արգար  
Պիտի վարէ մարդկութիւնն  
Դէպի պայծառ ապագան՝  
Արվաւէտուած խռէալով մը շքեղ...

Մտ է այդ օրն, հրճուէ՛ ցեղդ իմ, հրճուէ՛ դուն.  
Զի մարդկութեան անարգուած մեծ խղճմտանքն,  
Թերախողխող հագագէդ վեր բարձրացող  
կուլ հեծքերէն վրդովուած՝  
Արդէն ընդոստ կ'արթննայ...  
Ան քու անձիդ մէջ ինքզինք  
Մէյ մ'ալ կզգայ անարգուած  
Մէյ մ'ալ, այո՛, անիրուած կզգայ զինք:

Հրճուէ՛ ցեղդ իմ — որ դարերու ընդ մէջէն  
ճակատդ միշտ բարձր՝ բառնցքին տակ սարսափին,  
Դուն քալեցիր անսայթաք՝  
Խռէալի մարդերն ի վեր լուսողող —  
Պիտի տեսնեմ քեզ վերջապէս պսակու ամ  
Յաղթանակի սաղարթաղեղ դափնիով...:

6 Ապրիլ 1920



15324

Ք. ՆԻ Կ. ՄԼ

ԱՄԵՆՈՂԻՆ

ՈՒԿԱՐԳԹԻ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ՀԱ.

ԱՄՍՍԿԱ:

50,000.

ՓՆՏՏԵՆ, ՄԵՆՔԱՆԵՆ

Ֆլոր Մասկն Ե

Հայթայթի՛ մասն

վարտակով՝ ճարտնական  
քունի քին, Եղիպտոսի  
և դորաբանակներուն, Ս  
բանոցներուն, ևն. ևն.:

Գործատուն՝ Գահիր  
թատրոնին գլխաց): Վ.  
Ա. թագաւէլ-խատրա (Շթ)  
(կայարանին գլխաց), Ա.  
պէրիցէի մէջ, ևն. ևն.:

Ունի իր 80 մասնա  
գանաղան կեդրոններուն  
յաղուցիչները՝ Թայրագ  
զլխատոր քաղաքներուն

Գրասերն

Վ. Ա. Ս. Ս. Ա. Ա.

ԱՄԵՆ, ԿԱ

Ի մասնաւորի Կ

Անոնք կը կատարեն  
տեսակ գործողութիւններ  
հիմնուած 1914/ն, կրց  
հրատարակիւ վրայ գրաւ  
Հասցէ՝ Քի. Յրան Կ

2013



## ՆՈՅՆ ՀԵՂԻՆՈՒԿԷՆ

---

Հանրնցիին ոմիրը, 1911, Գին 2 դիկ. (սպասում)

Եզիպսանայ Տարեցոյց Երգ սարի 1919, Գին 20 դիկ. »

Խոռովի և Յարուքեան Երգեր } մեկ հասարի մեջ, Գին 20 դիկ.  
Գիտեբային նեծկլսուքներ

Խաչում Հաւասի մը Աղաղակը, Գին 6 դիկ.